Լավությո՛ւն արա, ջուրը գցիր՝ մի օր առաջդ կգա:

ԲԱՐԵԳՈՐԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»

BAREGORTS, ապրիլ-հունիս, 2025, № 2 (66), БАРЕГОРЦ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԱԳԱՂԹՎԱԾ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

2025թ. «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» (ԳՄՔԲԸՀ), որը մոտ 30 տարվա պատմություն ունի, շարունակում է իր բարեգործական ծրագիրը՝ սնունդ, հագուստ և առաջին անհրաժեշտության կենցաղային պարագաներ տրամադրելով Արցախից բռնի տեղահանված բազմազավակ ընտանիքներին: Ինչպես արդեն գիտենք, 2024 թվից Հիմնադրամի հետ համագործակցում է կանադական «Global Medic» մարդասիրական կազմակերպությունը:

Մարուսյա Սահակյանը օգնություն ստանալիս

Ապրիլի վերջին ԳՄՔԲԸՀ-ի հոգաբարձության խորհրդի անդամների և «Global Medic»-ի կամավորների հետ երեք օր շարունակ սննդի տեսքով աջակցություն տրամադրվեց ավելի քան 40 բազմազավակ ընտանիքի:

Ապրիլի 29-30-ը շահառուները ԵՊՀ-ի բակից ստացան իրենց հասանելիքը: Շահառուների թվում էին Արցախից բռնի տեղահանված բազմազավակ ընտանիքներ, որոնցից ոմանք ունեն նաև նահատակված հարազատներ:

Շուշիում բնակվող Գրիգոր և Մարուսյա Սահակյանների հինգ երեխաներով ընտանիքը նույնպես բռնագաղթվեց 44-օրյա պատերազմի պատճառով: Գրիգորը հերոսաբար զոհվել է այդ պատերազմում:

Այս անգամ Կանադայից Երևան ժամանած «Global Medic»-ի չորս կամավորների՝ Ալիսիա Լոկ-Մալեկի, Մայք Վուդի, Մարնի Մալաբարի և Քեյթի Քարավաջոյի հետ մայիսի 1-ին ԳՄՔԲԸՀ հիմնադիր և գործադիր տնօրեն, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի նախկին դեկան, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի, հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի նախկին դեկան, պրոֆեսոր Մարատ

Արմեն Վարդանյանի ու Արմինե Բաղալյանի ընտանիքը հիմնադրամի կողմից ստացավ կով

Գրիգորյանի, Գուրգեն Վարդանյանի, Ստելլա Մեհրաբյանի ուղեկցությամբ այցելեցին երեք շահառու ընտանիքների:

Արմեն Վարդանյանն ու Արմինե Բաղալյանն ունեն վեց երեխա: 2020 թ. բռնագաղթվել են Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր գյուղից: Այժմ բնակվում են Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղում՝ վարձով բնակարանում: Ընտանիքի ծնողներն ունեն նաև առողջական խնդիր, մշտապես ԳՄՔԲԸՀ-ի ուշադրության կենտրոնում են: Ձմռանը նրանց հատկացվել էր վառելափայտ, վերջերս՝ մեկ կթան

կով: «Global Medic»-ի կամավորները ծանոթացան այս ընտանիքի պատմությանը, բնակության պայմաններին:

Կամավորների հետ այցելեցինք Նուբար Դանիելյանի ընտանիք

Նուբար Դանիելյանը երեք զավակների հետ 2023 թվին է մազապուրծ հեռացել հայրենի գյուղից՝ Արցախի Մարտունու շրջանի Մաճկալաշենից: Պատմական այս գյուղը գտնվում է Ամարաս վանքի մոտ: Սրբավայրի հարևանությամբ գտնվող սահմանապահ գյուղի գրեթե բոլոր տղամարդիկ զինվոր էին ու պաշտպանում էին իրենց հայրենի տունը: 2020 թ. պատերազմից հետո թշնամին ավելի մոտեցավ Մաճկալաշենին: Եվ գյուղի տղամարդիկ մշտապես հենակետերում էին: 2023 թ. սեպտեմբերի 19-23-ը գյուղը մշտապես հրետակոծվում ու գնդակոծվում էր: Չնայած բազում խնդիրներին՝ գյուղի պաշտպանները մեծ կորուստներ պատճառեցին թշնամուն: Բայց պարտադրվեց բռնագաղթը: Այդ մարտերում նաև մաճկալաշենցիներ նահատակվեցին: Սկզբում Ջրվեժում, իսկ այժմ Նոր Խարբերդի այգեգործական հատվածում՝ վարձակալած տանն են բնակվում նույն մարտերի մասնակից, անմահ հերոս-նահատակ Զորիկ Դանիելյանի ընտանիքը՝ կինը Նուբար Դանիելյանը, դուստրը՝ Անգելինան և որդիները՝ Ալբերտն ու Դանիելը: Դժվար է Նուբարի համար. 2020 թ. 44-օրյա մարտերում էլ զոհվել են նրա երկու եղբայրները: Բայց զավակների ապագան առջևում է, իսկ տունդարձին հավատում է:

Քրիստինե Ամյանն ունի 12 երեխա. նրա ընտանիքը բռնի տեղահանվել է Արցախի Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորից: Այժմ ընտանիքը բնակվում է ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանի Շահումյան գյուղում:

Կամավորների հետ Քրիստինե Ամյանի ընտանիքում

Շահառուներին այցելելուց, համապատասխան օգնությունը տրամադրելուց հետո մասնակիցները այցելեցին նաև Մայր Աթոռ Սուրբ Էջիածին: Կանադացի հյուրերը ծանոթացան նաև հայոց պատմության որոշ դրվագների, հայտնեցին շնորհակալություն Գ. Մելիքյանին և նրա թիմակիցներին՝ ջերմ ընդունելության համար:

Զորիկ Ըռքոյան

Հիմնադրամի խորհրդի անդամները "Global Medic"-ի կամավորների հետ ԵՊՀ VII մասնաշենքում

Հիմնադրամի օգնությունը հասավ Տավուշի մարզ

Մարդու մեջ որքան բարություն կա, այնքան նրա մեջ կյանք կա:
Էմերսոն

Օրեր առաջ դարձյալ հյուրընկալվել էինք պրն Մելիքյանին, և այս անգամ էլ նա իրեն բնորոշ «Խոսքը գործ է» սկզբունքով սննդային երեք փաթեթ ուղարկեց մեզ հետ: Երևանից վերադառնալուց հետո անմիջապես կապ հաստատեցինք Տավուշի մարզի Հաղթանակ և Զորական համայնքներում հանգրվանած Մելքումյանների և Սարգսյանների ընտանիքների հետ: Հայրիկի ուղեկցությամբ այցելեցինք նրանց և փոխանցեցինք «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանի և «Global Medic»–ի կամավորների կողմից տրամադրված սննդային օգնությունը: Նշված երեք ընտանիքներն էլ ներառված են հիմնադրամի շահառուների ցուցակում: Իրենց երախտագիտությունը նրանք այսպես են հայտնում:

Հաղթանակ գյուղի Վարսիկ Սարգսյանի ընտանիքը ստացավ հասանելիք

Զորական գյուղի Ռուզաննա Մելքումյանի ընտանիքը ստացավ հասանելիք օգնություն

Անսահման սիրելի ու հարազատ պրն Մելիքյան, վերստին շնորհակալ ենք, թե՛ մեր հանդեպ ունեցած Ձեր վստահության և թե՛ արցախցի այս ընտանիքներին ևս միայնակ չթողնելու համար: Մեծ պատիվ, պատասխանատվություն և անսահման երջանկություն է ո՛չ միայն լինել Ձեր ժամանակակիցը, այլև՝ մաս և բաժին կազմել Ձեր Հիմնադրամի՝ կատարվող և կատարվելիք աշխատանքների: Անհատնում է Ձեր ներսից ճառագող բարությունը: Անուրանալի Ձեր գործը, անհատնում Ձեր սերն ու նվիրումը առ Հայրենիք ու Հայ:
... Երանի՜ բոլորս իսկապես կարողանայինք Ձեր աչքերով նայել աշխարհին ու հատկապե՛ս Հայաստան և Արցախ աշխարհներին: Երանի՜ բոլորս իսկապես կարողանայինք զգալ Հայրենիքը առանց տարանջատումների, սահմանների ու սահմանափակումների, ինչպես զգացել և զգում եք Դո՛ւք:

Սյուզաննա և Ռուզաննա Աղաբաբյաններ, գ. Կողբ

Այցելություն ՀՀ-ում Կանադայի դեսպանություն

Ս.թ. ապրիլի 11-ին Հայաստանում Կանադայի արտակարգ և լիազոր դեսպան Էնդրյու Թըրները դեսպանատանն ընդունեց «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն, պրոֆ. Գուրգեն Մելիքյանին և հոգաբարձության խորհրդի անդամ Մերի Մելիքյանին: Ջերմ մթնոլորտում ծավալվեց մտերմիկ զրույց, որում Հիմնադրամի տնօրենը հանգամանալից ներկայացրեց իրենց գործունեությունը, ընթացիկ ծրագրերը, երախտագիտություն հայտնեց պրն դեսպանին «Global Medic» կանադական կազմակերպության կամավորների միջոցով Հայաստանում Արցախից բռնագաղթված ընտանիքներին ամենամսյա օժանդակություն ցուցաբերելու համար:

Հանդիպման ավարտին ՀՀ-ում Կանադայի դեսպանը պատրաստակամություն հայտնեց շարունակել օժանդակությունը Հիմնադրամին, որն օգտակար կլինի Արցախից բռնի տեղահանված և Հայաստանում ապաստանած բազմազավակ ընտանիքներին:

Ձախից աջ՝ Մերի Մելիքյան, Գուրգեն Մելիքյան, արտ. և լիազ. դեսպան Անդրյու Թըրներ

Հայրենաճանաչողական խաղը հասավ Կողբ

«Գալով Հայաստան՝ համբուրել եմ հայրենի հողը և իմ ամբողջ էությամբ նվիրվել Հայոց գործին: Ես երջանիկ եմ, որ Հայ եմ, երջանիկ, եմ, որ ապրում եմ Հայաստանում, երջանիկ եմ, որ ուժերիս ներածին չափով օգտակար եմ եղել, և օգտակար եմ լինում երկրիս», – հաղորդումներից մեկում ասում է պրն Գ. Մելիքյանը:

Հայրենիքը սիրելու համար նախ պետք է խորությամբ ճանաչել այն, լավ իմանալ նրա պատմությունն ու մշակույթը: Իրապես օրինակելի, յուրատիպ ու բացառիկ Հայ Գ. Մելիքյանը, ում խոսքը փաստվել ու շարունակաբար փաստվում է գործով: Նվիրում՝ առ Հա՛յ ու Հայրենի՛ք, նվիրում, որ փոխում է կյանքեր, ստեղծում մնայուն ու երբե՛ք չմարող ու չխամրող արժեքներ:

Ինչպես հայտնի է, «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» երկար տարիներ աջակցություն էր ցուցաբերում Արցախի տարբեր բնակավայրերում ապրած բազ-

Աղաբաբյան քույրերը դպրոցի տնօրեն՝ տիկին Հայկանուշի հետ

մազավակ և սոցիալապես անապահով ընտանիք ներին: Արդեն երկրորդ տարին է՝ շարունակում է նրանց աջակցել ՀՀ տարբեր մարզերում և Երևանում, որտեղ վերաբնակվել են նրանք իրենց

Բագրատ Սահակյանի անվ. դպրոցը Կողբում

բնօրրանից բռնի տեղահանվելուց հետո: Հարկ է նշել, որ հիմնադրամը, վերոնշյալ աջակցությունից զատ, արդեն ամիսներ շարունակ իր հետևողական հոգածության ներքո է պահում նաև Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշորացված համայնքին մերձ Կողբ բնակավայրը:

Այս անգամ՝ Կողբի՝ Բագրատ Սահակյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցին է նվիրաբերվել «Հայրենիք» անվանումը կրող թվով երկու հայրենաճանաչողական խաղը, որը նախատեսված է բոլոր տարիքի հայերի համար:

Դպրոցի տնօրեն տիկին Հայկանուշ Ալեքսանյանը, իր խորին շնորհակալության և երախտագիտության խոսքերը հղելով, վստահեցրեց, որ այս խաղերը միանշանակ կծառայեն իրենց նպատակին՝ բարձրացնելով աշակերտների իրավագիտակցությունը, Հայրենիքն էլ ավելի խորությամբ ճանաչելու, սիրելու և պատասխանատվությամբ վերաբերվելու առումով:

Ամփոփելով խոսքը՝ նա նշեց նաև, որ երախտիքի են արժանի նմանատիպ տպավորիչ նախաձեռնությունները և, ինչ խոսք, ոգևորիչ՝ աշակերտների համար:

Սյուզաննա և Ռուզաննա Աղաբաբյաններ, գ. Կողբ

Հիմնադրամի կողմից հրատարակված գրքերը Աղաբաբյան քույրերի միջոցով հասան Կողբ

Ամեն օր հայրենիքում լինելը երջանկություն է, և հայրենի ժողովրդի համար աշխատելը՝ հատկապես:
Գուրգեն Մելիքյան

Այո՛, Գուրգեն Մելիքյանի յուրաքանչյուր ապրած օր լավագույն վկայությունն է, իր իսկ խոսքերի:

Աղաբաբյան քույրերը զրուցում են գրադարանավարուհի տիկին Գայանեի հետ

Օրեր առաջ կրկին այցելել էինք պրն Գ. Մելիքյանին: Ինչպես մեր ամեն հանդիպման ժամանակ մենք միասին շատ ենք զրույցում մեր Հայրենիքի և գյուղի մասին, և նա, մեր մեջ տեսնելով և զգալով թեկուզ յուրաքանչյուրս մեր փոքր չափով շենացնելու ձգտումն ու սերը առ Հայրենիք, այս անգամ էլ առաջարկեց, որ Հիմնադրամի կողմից մեր գյուղի՝ Կողբի մշակույթի կենտրոնի ներքո գործող երկու գրադարաններից յուրաքանչյուրին նվիրաբերվի «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» կողմից հրատարկված թվով 20 գիրք ինչին մենք մեծ սիրով և ոգևորությամբ համաձայնեցինք:

Այսօր այցելեցինք և փոխանցեցինք գրքերը:

Գրքերը նվիրաբերվեցին գրադարանին

Գրքերը դասավորելու ընթացքում ես ու քույրս Ռուզաննան զրուցում էինք գրադարանավարուհի Տիկին Գայանեի հետ, նրա խոսքով. - Հատկապես սահմանամերձ գյուղական շրջաններում շատ է զգացվում նոր և հետաքրքիր գրականությամբ համալրման կարիք: Վստահեցնելով, որ այս գրքերը նոր շունչ և հետաքրքրություն կառաջացնեն, թե' երիտասարդ, թե' ավագ սերնդի ընթերցողների շրջանում:

Համայնքի ղեկավար Արարատ Թամազյանը, մշակույթի կենտրոնի տնօրեն Սասուն Մուրադյանը և գրադարանների աշխատակիցները իրենց խորին շնորհակալությունը և երախտագիտության խոսքերը խնդրեցին անպայման փոխանցել, թե' պրն Մելիքյանին, թե' հիմնադրամի բարերարներին:

Սյուզաննա և Ռուզաննա Աղաբաբյաններ, գ.Կողբ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին», ԵՊՀ *արևելագիտության մագիստրոս՝ բանասեր-իրանագետ, Բնական գիտությունների Հայկական և Ռուսական, Կանադայի Միջազգային ինֆորմատիզացիայի ակադեմիաների ակադեմիկոս, բանասիրական գիտությունների թեկնածու, Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, «ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ» անվանակարգում՝ Ձեր ապրած հողին օգնելու ավանդույթների ձևավորման գործում ունեցած մեծ ավանդի համար «EcoWorld» միջազգային էկոլոգիայի մրցանակի առաջին աստիճանի դափնեկիր* **Գուրգեն Վրեժի ՄԵԼԻՔՅԱՆԻՆ.**

Արգո **Գուրգեն Վրեժի Մելիքյան...**

Մեր երախտագիտությունն ու գնահատանքը, սրտագին շնորհակալությունն ենք հայտնում հայ արևելագիտության և բանասիրության ռահվիրա, մեր ազգի երևելի Գուրգեն Վրեժի Մելիքյանին Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնին, Գորիսի պետական համալսարանին, քաղաքային, մանկական ու դպրոցների գրադարաններին նվիրաբերած «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամի միջոցներով վերջին տարիներին հրատարակված բազմաթիվ գրքերի, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, հայագիտական, պատմագիտական, գեղարվեստական, գիտատեխնիկական,

Պրոֆ. Ս. Մուրադյանը Գուսան Աշոտի անվան մշակույթի տանը զեկուցում է մեծ երգչի արվեստի մասին

հանրամատչելի և կենսագրական, պատմամշակութային ժառանգության պահպանման վերաբերյալ մեծածավալ արվեստավարժ մասնագիտական գրականության, փոքրիկ ընթերցողների համար հրաշալի և երկար սպասված գրքերի համար:

Առանձնահատուկ գնահատման է արժանի «Գուսան Աշոտը՝ Սայաթ-Նովայի ժառանգորդը» խորագրով Գորիսում կայացած գիտաժողովի շրջանակներում արգո Գուրգեն Վրեժի Մելիքյանի հերթական անգնահատելի նախաձեռնությունը Արցախի Ցեղասպանությունից մազապուրծ եղած, բռնի տեղահանված, փլրկված ու գաղթի ճամփան բռնած, բայց հետդարձի փոքր հույսով Գորիսում ապաստան գտած մեր հայրենակից բազմազավակ և կարիքավոր ընտանիքների անդամներին հերթական նյութական աջակցություն և ֆինանսական օգնություն տրամադրելու համար: Կրկին շնորհակալություն մեր լեզվի, գրականության, տնտեսագիտության, միջուկային սինթեզի, աստվածաբանության, գեղարվեստի բնագավառների արվեստավարժ երևելիների՝ Գորիսում անչափ արժեքավոր ներկայության համար: Մենք անհամբեր սպասում ենք Ձեզ կրկին տեսնել Գորիսում: Գորիսի աշխույժ և ոգեշնչող հանդիպումը այն էներգիան է, որը դրական ազդեցություն է ունեցել, մեծ ուրախություն, խանդավառություն և կենսական ուժ տվել մեր ժողովրդին և հասարակությանը՝ զգալու կյանքի լիարժեքությունը, կառուցելու հարաբերություններ՝ կապելով

մարդուն շրջապատող աշխարհի հետ և նպաստելով մարդկանց մտերմությանն ու փոխադարձ վստահությանը, մարդու՝ սիրված և պաշտպանված զգալուն: Միայն այդպես է հնարավոր կոլեկտիվ ինքնության ստեղծումը, անհատի և համայնքի սերտացումը, ինչը, ի վերջո, նպաստում է անհատի, ընտանիքի, հասարակության և թիմի հաջողությանը:

Նվիրաբերած գրքերը մշակույթի կենտրոնին և գրադարաններին

Մենք մեծապես գնահատում ենք Ձեր անձնական և Ձեր գլխավորած Հիմնադրամի ներդրումը մեր միջոցառման հաջողության մեջ, առավել ևս՝ Ակսել Բակունցի տուն-թանգարանին «Միրհավը» պատմվածքի ֆրանսերեն տարբերակը հրատարակելու Ձեր խոստումը, որը, համոզված ենք, շուտով գործ կդառնա, ինչը բնորոշ է Ձեզ:

Միաժամանակ հայտնում ենք համատեղ աշխատանքը շարունակելու մեր պատրաստակամությունը:

Մենք հույս ունենք, որ Դուք, վայելելով Սյունյաց լեռնաշխարհի թագ ու գոհար Գորիսի բնության ու մարդկանց հմայքը, յուրացրիք ինչ-որ նոր և օգտակար բան և ծրագրում եք ստեղծել մեր համագործակցությունն ամրապնդող արժեքավոր կապեր:

Ակադեմիկոս Մարտիկ Գասպարյան

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյան և հոգաբարձության խորհրդի հարգելի անդամներ,

Այսու մեր խորազգաց շնորհակալությունն ենք հայտնում Ձեզ, որ մեծահոգաբար կապող օղակ դարձաք մեր և ԳՄՔԲՀ հոգաբարձության խորհրդի անդամ պարոն Բագրատ Նազարյանի միջև, ում միջոցով մեր ամբիոնի ուսանողության համար կատարած նյութական աջակցությունը տեղ հասավ, և ուսանողների մի հատվածը օգտվեց այդ օժանդակությունից:

Մեծարգո պրոֆեսոր, մեր ամբիոնն իր հերթին ունի հովանավոր հանձնախումբ, որն արդեն երկար տարիներ զբաղվում է կարիքավոր ուսանողների

Ձախից երրորդը՝ Անդրանիկ Սիմոնյանը դասախոսների և շրջանավարտների հետ

օժանդակությամբ: Մենք ուրախ ենք, որ պրն Բագրատ Նազարյանի նշանակած անձն էլ, որպես ծախսարար, ընդգրկվել է այդ հանձնախմբում, այնպես որ՝ գումարները հովանավորից ուղղակի անցնում են ուսանողին և ծառայում անհրաժեշտ նպատակին: Տեղեկացնենք, որ այս տարվա առաջին կիսամյակում հատկացումները կատարվել են հետևյալ կարգով՝ երկու ուսանող, յուրաքանչյուրը՝ 3.162.000 թուման (ԱՄՆ մեկ դոլարի փոխարժեքն այսօր իրանական 60 000 (վաթսուն հազար թուման է), երկու ուսանող՝ յուրաքանչյուրը՝ 3.525.000 թուման, երկու ուսանող՝ յուրաքանչյուրը՝ 5.684.000 թուման, մեկ ուսանող՝ 3.997.000 թուման, և մեկ ուսանող՝ 4.500.000 թուման:

Ամբիոնում, վերջին չորս տարիներին, անվճար դասավանդած 14 դասախոսներից ութ հոգու համար իրանական Նովռուզի տոների նվերներ են տրվել, ընդամենը՝ 40.000.000 թուման:

Ուսանողների երկրորդ կիսամյակի թոշակները դեռ չեն վճարվել:

Նաև պետք է վճարվեն համալսարանական այն դասագրքերի պատրաստման համար, որոնք կրկնօրինակվում են Թեհրանում:

Ազատ Համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոսական կազմի և հովանավոր հանձնախմբի անունից՝ Ձեր՝ ***Անդրանիկ Սիմոնյան,*** *ԲԳԹ*

2025 թ. հունիսի 1-ը ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ծննդյան օրն էր …
և նրա տուն-թանգարանի հիմնադրման 6-րդ տարին

…Լուսինե Զաքարյանը հայ մշակույթի պատմության նշանակալի երևույթներից է: Նա եկավ, որ աշխարհիկ բեմերում հնչեցնի միջնադարյան հայ հոգևոր երգը և իր աստվածաշնորհ ձայնով ու անմրցելի երգեցողությամբ նվիրվեր հայ տոհմիկ երաժշտության հանրայնացմանը:

Երգի դիցուհին

Իր այս առաքելությունն իրականացնելու ճանապարհին նրա հիմնական խորհրդատուն էր անբաժան ընկերն ու ամուսինը՝ երջանկահիշատակ Խորեն Պալյանը՝ երգիչ և մանկավարժ, շարականագետ ու ծիսագետ, գրաբարագետ, ազգային ժառանգության խորագետ պահապան…

Աշխարհի որ բեմում կամ սփյուռքի հայկական գաղթօջախներում էլ երգում էր Լուսինե Զաքարյանը, հոգեպես վերածնվում էր հայ մարդը, իսկ օտարը ճանաչում էր այն ժողովրդին, որը եվրոպական Վերածննդից դեռ երեք դար առաջ Գրիգոր Նարեկացու պես հսկա է ծնել…

Լուսինե Զաքարյանը քաջածանոթ էր համաշխարհային երաժշտության ողջ գանձարանին: Պահպանված միակ հարցազրույցում նա ասել է. «-Շատ եմ սիրում Բախի, Հենդելի, Մոցարտի և այլ մեծերի ստեղծագործությունները, բայց իմ հոգուն առավել մոտ են մեր միջնադարյան աննման գոհարները և մանավանդ՝ Խորենացու, Նարեկացու, Շնորհալու հոգեզմայլ մեղեդիները: Ես շատ ուրախ եմ, որ կարողացա մի փոքր բաժին բերել ի նպաստ Կոմիտասի հիմնադրամի, քանի որ այստեղ Կոմիտասի անունը կա: Կոմիտասն այն հանճարն է, որի առաջ պետք է խոնարհվել»:

Ուրիշ ովքե՞ր պիտի դա ըստ արժանվույն գնահատեին, եթե ոչ մեր ազգի մեծերը: Ահա՛ Պարույր Սևակի բնորոշումը. ***«Լուսինեն հայ երգարվեստի մեջ նույն դերն ունի, ինչ ճարտարապետության մեջ՝ Թորոս Թորամանյանը»:***

Լուսինե Զաքարյանը մնաց ժողովրդի սրտում, սերունդների հիշողության մեջ: Ազգային ինքնաճանաչումից է սկսվում մեր վերածննդի նոր ճանապարհը: Դրա ամենից ամուր պատվարներից մեկը Լուսինե Զաքարյան տուն-թանգարանն է, որի ստեղծումը եղել է Խորեն Պալյանի փայփայած երազանքը: Եվ այն իրականություն չէր դառնա, եթե չլինեին Խորեն Պալյանի եղբորորդու՝ ամերիկահայ հանրաճանաչ բժիշկ Ռաֆֆի Պալյանի նվիրական ջանքերը:

2019 թ. հունիսի 1-ին՝ երգչուհու ծննդյան օրը, բացվեց Լուսինե Զաքարյան տուն-թանգարանը՝ Եզնիկ Կողբացի 42 հասցեում: Նրա նվիրյալ տնօրենն է փիլիսոփայական գիտությունների դոկտոր, արվեստի սոցիոլոգ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի (Իսրայել, Հայֆա) հայաստանյան մասնաճյուղի վարիչ պրոֆ. Սուսաննա Դավթյանը, ով 1964-ից նվագակցել է Խորեն Պալյանին, երբեմն էլ՝ Լուսինե Զաքարյանին, և նրանց ընտանիքները սերտ մտերիմ կապերի մեջ են եղել…

Անցնող վեց տարիներին թանգարանը, բարեբախտաբար, դարձավ մշակութային հենց այն կանթեղը, որը սերմանում, տարածում է Խորեն Պալյանի և Լուսինե Զաքարյանի ժառանգության լույսը:

…Թանգարանում հաճախակի կազմակերպվող յուրաքանչյուր միջոցառում տիկին Սուսաննան ավանդաբար սկսում է Գրիգոր Նարեկացու աղոթքով: Այս անգամ նա ակամա հիշեց սփյուռքահայ բանաստեղծ Սիմոնիկի (Սիմոն Մելիքսեթյան) տողերը՝ նվիրված Լուսինե Զաքարյանին…

- Երգէ՛, Լուսինե, երգէ՛,
Երգդ օրհնուած բերք է,
Երգէ, Լուսինե, երգէ՛,
Երգդ աղօթք, օրհներգ է…

- Ողջունում եմ բոլորիդ՝ անուն առ անուն,- ասաց նա: - Թույլ տվեք փոխանցել ձեզ նաև ա՛յն մարդկանց ողջույնները, ովքեր հարգելի պատճառներով չեն կարողացել ներկա գտնվել: Ամենից հարգելին, իհարկե, Ռաֆֆի Պալյանինն է՝ Խորենի եղբորորդունը…

Սրահը փոքր էր մեծաթիվ հյուրերի համար, որոնց թվում էին Գոհար Շագոյանը, Աշոտ Օհանյանը, Նադյա Անտոնյանը, Կորյուն Առաքելյանը, Անահիտ Օհանյանը,

Լուսինեի և Խորենի ընտանիքի երկար տարիների մտերիմները՝ տիկին Արփենիկը, տիկին Նելլին… Ներկա էր Լուսինե Զաքարյան տուն-թանգարանի հոգաբարձուների խորհրդի անդամ, պրոֆեսոր, մեր օրերի քայլող լեգենդ Գուրգեն Մելիքյանը:

- Ամեն առիթով ասել եմ ու կասեմ, եթե չլիներ Ռաֆֆի Պալյանի ու Գուրգեն Մելիքյանի աջակցությունը, ես ոչինչ անել չէի կարող,– ասում է տիկին Դավթյանը:

-Ես չէ, հիմնադրամը…Ես այստեղ շատ աննշան դեր ունեմ,– համեստորեն միջամտեց պրոֆ. Գ. Մելիքյանը, բայց Ս. Դավթյանը շարունակեց.

- Նա «Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրենն է: Վստահում են նրան, այլապես հիմնադրամը գումար չէր ունենա… Անցյալ անգամ ուսանողներից այնքան լավ կատարումներ լսեց, որ յուրաքանչյուրին պարգևատրեց:

Համերգի ժամանակ

Հիշենք, որ 2021 թ. «Տենոր» մշակութային հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Լ. Զաքարյանի տուն-թանգարանի աջակցությամբ Արաբկիրի հայորդաց տանը տեղի ունեցավ վոկալի՝ Լուսինե Զաքարյանի անվան հանրապետական առաջին մրցույթը:

Նշենք, որ անվանական կրթաթոշակի արժանացած ապագա երգիչները (երաժշտական երեք ուսումնական հաստատություններից ընտրված) հաջողությամբ ընդունվել են Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա: Իսկ նրա շրջանավարտ, անվանական կրթաթոշակի արժանացած Լիլիթ Դավթյանն այսօր մեներգում է Բեռլինի օպերային թատրոնում: Նա երախտագիտությամբ նշում է, որ դեպի մեծ արվեստ իր ճանապարհը սկսվեց այս տուն-թանգարանից: Նույնը պետք է ասել Հովհաննես Կարապետյանի մասին:

Թանգարանի ձեռքբերումներից է վերոնշյալ երաժշտական կրթօջախների ներգրավվածությամբ՝ նոր սերնդի համար ճանապարհ հարթելուն նպատակաուղղված՝ Լուսինե Զաքարյանի և Խորեն Պալյանի անվան ամենամյա մրցույթների կազմակերպումը:

Միջոցառման ծրագիրը հարուստ էր՝ դասական ստեղծագործություններից, հայ հոգևոր երգերի գանձերից մինչև Սայաթ-Նովա, ժողովրդական երգեր: Իրենց կատարումները ներկայացնում էին Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի, Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և վոկալ արվեստի ուսումնարանի սաները: Հատկապես այս ուսումնարանը ներկայացնող սանը՝ Արմեն Դեմիրճյանը, օրերս զորակոչվելու է հայոց բանակ՝ պաշտպանելու մեր հայրենիքի սահմանները: Սայաթ-Նովայի երգերի նրա տպավորիչ կատարումը ներկաները գնահատեցին ամենաջերմ վերաբերմունքով՝ մաղթելով նրան բարի ծառայություն: Իսկ Գ. Մելիքյանն առաջարկեց պարգևատրել բանակ մեկնող այս շնորհալի երիտասարդին:

Համերգային ծրագրից հետո պրոֆեսոր Գ. Մելիքյանը, ոգևորված նոր սերնդի՝ ազգայինը պահպանելու պատրաստակամությամբ, տեղում որոշեց հիմնադրամի միջոցներով նրանց ևս արժանացնել նյութական պարգևների…և ոչ միայն սաներին, այլև նրանց ուսուցիչներին (ավելի քան 15 հոգու):

….Միջոցառման ամբողջ ընթացքին հուզված հետևում էր Լ. Զաքարյանի քույրը՝ տիկին Լյուդմիլան, ով սովորաբար ներկա է լինում իր հարսի, դուստրերի, թոռնուհու հետ: Եվ տնօրենին ուղղված մեկ նախադասությունը բնութագրական էր.

-Սուսաննա, եթե չլիներիր դու, քրոջս անունը այսքան չէր հնչի…

Իսկ Լուսինե Զաքարյանի հարթաքանդակի հեղինակ Հայկ Թոքմաջյանը ուրախացրեց բոլորին՝ թանգարանին նվիրելով Լուսինեի մարմարե կիսանդրին:

Միջոցառմանը ներկա բոլոր հյուրերը հյուրասիրության սեղանի շուրջ երկար շարունակեցին Լուսինե Զաքարյանի ու Խորեն Պալյանի և առհասարակ հայ երգարվեստի մասին իրենց խոսքն ու զրույցը…

Միջոցառման ավարտից հետո

Հասմիկ Պողոսյան

Հայագիտության և մշակույթի ոլորտի լրագրող,
Հայաստանի ժուռնալիստների միության անդամ

Հիմնադրամի օգնությունը Արցախից բռնի տեղահանվածներին շարունակվում է

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍԱՐՔԵՐ

Հ/h	Ազգանուն, անուն	Բնակության վայր	Երեխա	Սարքի տեսակը
1.	Գրիգորյան Մ.	Մաճկալաշեն / Աշտարակ	3	Լվացքի մեքենա
2.	Օսեյան Ա./Բեգոյան Զ	Բերձոր / Չարենցավան	5	Սառնարան և հեռուստացույց
3.	Սամսոնյան Ա. / Կոտյան Ռ.	Իշխանաձոր / Բաղրամյան	5	Լվացքի մեքենա
4.	Սաֆարյան Լ./ Սարգսյան Ի.	Կոճողոտ / Աղձք	9	Սառնարան և սառցարան
5.	Թովմասյան Ժ./ Օրդուբեկյան Ս.	Բերձոր / Գետաշեն	6	Սառնարան
6.	Պետրոսյան Ա. / Բաղդասարյան Ա.	Ճանկաթաղ / Գետափ	6	Հեռուստացույց

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ. 50 000 ԴՐԱՄ՝ ՆՈՐԱՄԱՅՐԵՐԻՆ, 10 000 ԴՐԱՄ՝ ԲԱԶՄԱԶԱՎԱԿՆԵՐԻՆ

Հ/h	Ամսաթիվ	Ազգանուն, անուն	Բնակության վայր	Երեխա	ՀՀ դրամ
1.	20.12.24	Ալոյան Վ./Խեչումյան Ռ.	Միրիկ / Բալաք	5	50 000
2.	14.01.25	Մելիքսեթյան Լ.	Սուս / Գետափ	3	50 000
3.	14.01.25	Գուլոյան Է./Փիլոյան Ա.	Բերձոր/Չարենցավան	3	50 000
4.	14.01.25	Բաբայան Մ./Բաբայան Ս.	Բերձոր /Մրգավետ	5	50 000
5.	18.03.25	Դանիելյան Ն.	Մաճկալաշեն / Նոր Խարբերդ	3	50 000
6.	30.06.25	Կարապետյան Ա./Ադամյան Գ	Միրիկ/Երևան	5	50 000
7.	02.07.25	Նավասարդյան Ս./Հակոբյան Կ.	Քարվաճառ/Հրազդան Միկրո	6	50 000
8.	02.07.25	Գրիգորյան Ն./ Գրիգորյան Գ.	Սարուշեն / Օշական	4	50 000
9.	01.04.25	Գրիգորյան Ա./Խոսրովյան Է.	Հիրիկ / Ներքին Սասնաշեն	9	10 000
10.	02.07.25	Պետրոսյան Ժ./ Բաղդասարյան Ա.	Ճանկաթաղ / Գետափ	8	10 000
11.	02.07.25	Ավետիսյան Յ. / Աղաբեկյան Գ.	Մոխրաթաղ / Մասիս 9 շ.	4	10 000
12	11.07.25	Մանվելյան Շ.	Բերձոր/թ. Էջմիածին	7	10 000

ԽԵԱ ծրագիր

Հ/h	Ամսաթիվ	Անուն, Ազգանուն	Բնակության վայր	Երեխա	ՀՀ դրամ	Հովանավորներ
1.	01.04.25	Բաղալյան Ա/Վարդանյան Ա.	Իշխանաձոր/Ձորաղբյուր	6	320 000	Իրանցի բարերար
2.	06.06.25	Գրիգորյան Ա./Խոսրովյան Է.	Հերիկ/Ներքին Սասնաշեն	9	350 000	Վերոնիկա Վանեցյան
3.	09.06.25	Իշխանյան Լ./Գրիգորյան	Եղցահող / Ջրառատ	3	330 000	Գաբրիել Վանեցյան
4.	14.06.25	Գալոյան Մ.	Ներքին Սուս / Լեռնագոգ	5	300 000	Գևորգ Վանեցյան
5.	27.06.25	Աճեմյան Լ./Գալուստյան Հ.	Ներքին Սուս / Ձառ	8	300 000	Մարիամ Վանեցյան
6.	07.07.25	Դարագուլյան Վ./Դարագուլյան Հ.	Ծիծեռնավանք/Բյուրավան	5	320 000	Աննա Վանեցյան

Արցախյան պատերազմներին մասնակցած հաշմանդամ զինվորների և կամավորների՝ հիմնադրամին հասցեագրված շնորհակալական նամակներից

Նամակ յոթերորդ

Շնորհակալ ենք «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» և «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամին՝ մեզ աջակցելու և SS ոլորտում կրթություն ստանալու հնարավորություն ընձեռելու համար:

Ես՝ Տիգրան Հարությունյանս, ծնվել եմ 2001 թ. Ապարանի տարածաշրջանում: 2019 թ. ընդունվել եմ ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետ, իսկ 2020-ի ամռանը՝ զորակոչվել բանակ: Որպես կապավոր ծառայել եմ «Եղնիկներ» կոչվող զորամասում, 44-օրյա պատերազմի ամբողջ ընթացքում:

Պատերազմը ցույց տվեց, որ ապագան կարող է փոխվել մեկ օրվա, անգամ մեկ ժամվա ընթացքում: Բայց հենց այդ փորձառությունն էր, որ սովորեցրեց ինձ վերարժևորել կյանքը և ապագային նայել լավատես մարդու հայացքով:

Զորացրվելուց հետո շարունակեցի ուսումս համալսարանում: Ուսմանը զուգահեռ հնարավորություն ունեցա մասնակցել նաև «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի կազմակերպած SS ոլորտի դասընթացներին: Բանիմաց դասախոսների և հրաշալի կազմակերպված ծրագրի շնորհիվ ես ունեմ մասնագիտություն, որը կօգնի ինձ իրականացնել իմ երազանքները և ամենակարևորը ձեռք բերեցի ընկերներ ովքեր ինձ համար շատ հարազատ դարձան:

Համոզված եմ, որ ստացած նոր մասնագիտությամբ կկարողանամ օգտակար լինել և՛ ընտանիքիս, և՛ մեր սիրելի հայրենիքին: Թեև ապագայի մասին խոսում եմ զգուշավոր, քանի որ պատերազմը սովորեցրեց, որ ամեն ինչ կարող է փոխվել, բայց հենց այդ փորձառությունն է, որ ստիպեց ինձ կյանքին ասել այո՛ և ապագային նայել լավատեսության հայացքով:

Երախտագիտությամբ՝
Տիգրան Հարությունյան

Նամակ ութերորդ

Շնորհակալ ենք «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» և «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամին՝ մեզ օժանդակելու համար:

Դավիթ Աբգարյանն եմ: Ծնվել եմ 2002 թ. Արագածոտնի մարզում, 2020 թ. դպրոցն ավարտելուց հետո ընդունվել եմ հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի կիրառական մաթեմատիկայի բաժին և զորակոչվել բանակ:

Ընդամենը մեկ ամսվա ծառայող էի, երբ սկսվեց 44-օրյա պատերազմը: Առաջին իսկ օրվանից եղա առաջնագծում, հիմնականում Ակնայի շրջանում: Պատերազմը տարավ իմ մանկության երկու սիրելի ընկերներին՝ Նարեկին և Գուրգենին, ովքեր երկուսն էլ զոհվեցին պատերազմի վերջին օրը՝ նոյեմբերի 9-ին:

Դրանից հետո շարունակեցի ծառայությունը և զորացրվեցի 2022-ի օգոստոսին: Բայց պատերազմից հետո հոգեբանական հետևանքները ստիպեցին հրաժարվել համալսարանական ուսումից: Չնայած այլևս չգնացի համալսարան, սակայն չդադարեցի կրթվել: Առցանց տարբեր դասընթացների մասնակցեցի, և 2024-ի ապրիլին տեղեկացա «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի կողմից կազմակերպված ծրագրավորման դասընթացների մասին:

Շնորհիվ «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի ես հնարավորություն ունեցա մասնակցել այս կարևոր ծրագրին: Համոզված եմ, որ ստացված նոր մասնագիտությամբ կկարողանամ օգտակար լինել և՛ ընտանիքիս, և՛ մեր սիրելի հայրենիքին: Ձեր աջակցությամբ ոչ միայն գիտելիքներ ենք ստացել, այլև նոր հույս և հավատ, որ մենք՝ պատերազմի մասնակիցներս, կարող ենք նորից գտնել մեր ճանապարհը կյանքում և ծառայել մեր ժողովրդին:

Խորին հարգանքով՝
Դավիթ Աբգարյան, 03.07.2025 թ.

Հիմնադրամի մեծ բարերարներ՝ Վաղարշակ և Սիլվա Փիլոսյանները՝ Հայաստանում

Վերջերս տեղի ունեցավ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» ընդլայնված նիստը: Հիմնադրամի լավագույն բարերարներից մեկը՝ հոգաբարձուների խորհրդի անդամ Սիլվա Փիլոսյանը, ով ժամանել էր ԱՄՆ-ից ամուսնու՝ հանրահայտ բժիշկ և հանրային գործիչ Վաղարշակ Փիլոսյանի հետ, նույնպես մասնակցեց նիստին: Վերջինս ԱՄՆ-ում իր համախոհների հետ տասնամյակներ շարունակ գնահատելի լուրջ գործունեություն է ծավալում Հայկական հարցի լուծման և պատմական արդարության վերականգնման ուղղությամբ:

Նիստի ընթացքում քննարկվեցին օրախնդիր շատ հրատապ հարցեր: Խորհուրդը երախտա-

Ընդլայնված նիստը՝ մեր բարերարների հետ

գիտություն հայտնեց բարերարներին և նրանց նվիրեց Շմավոն Շմավոնյանի «Արենի» գեղանկարը:

ՀՀ վաստակավոր նկարիչ Շ. Շմավոնյանը նույնպես «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» լավագույն բարերարներից է, հոգաբարձուների խորհրդի անդամ, իր ցուցահանդեսներով հանրահռչակվել է համայն աշխարհում:

Փիլոսյանները հեղինակից ստացան Հիմնադրամի նվիրած «Արենի» գեղանկարը

«Բարեգործ» պաշտոնաթերթը նախորդ համարներում հաճախ է անդրադարձել անվանի գեղանկարչի հայաստանյան՝ «Արարատ» շարքի բնանկարներին ու մի քանիսը տպագրել իր էջերում: Այս համարում զետեղում ենք դարձյալ նրա հայկական բնանկարներից մեկը՝ «Գարուն» խորագրով: Հայրենի բնության այս գեղատեսիլ գունանկարը Փիլոսյանների կողմից կհանձնվի ԱՄՆ նախագահության թեկնածու Ռոբերտ Քենեդուն հետևյալ գրությամբ՝ *To: Robert Kennedy Jr. for reversing the Karabagh (Artsakh) Genocide.*

Վարպետի «Գարունը» Փիլոսյանների կողմից Ռոբերտ Քենեդուն

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝
ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ. Բան, գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝
Ավագյան Ա., բ.գ.դ, պրոֆեսոր
Մելիքյան Գ., բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալ., պ.գ.թ., պրոֆեսոր
Նյութերի դասակարգումը՝ Հոգաբարձության խորհրդի անդամ՝ **Մերի Մելիքյանի**
Համարի շարվածքը, ձևավորումը՝ Ս. Մուրադյանի, Լուսանկարները՝ **Զ. Ըռքոյանի**:
Տպաքանակը՝ 99:
Թերթը բաժանվում է անվճար:
Խմբագրության հասցեն՝
Երևան-0025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 212 սենյակ, Հեռ.: 060710617; 055-522936; 010-552537: